9506	Մարզագույք և սարքավորումներ՝ ընդհանուր ֆիզկուլտուրայով, մարմնամարզությամբ, թեթև աստղեղիկայով, սպորտի այլ ձևերով (ներառյալ՝ սեղանի թենիսը) զբաղվելու կամ բացօթյա խաղերի համար՝ տվյալ խմբի այլ տեղերում չնշված կամ չներառված, լողավազաններ և ավազաններ՝ երեխաների համար	10	0
9508	Կարուսելներ, ճոճանակներ, հրաձգարաններ և այլ աստղակցիոններ, շարժական կրկեսներ և շարժական գազանանոցներ, շարժական թատրոններ	10	0
96	Տարբեր պատրաստի իրեր	10	0
97	Արվեստի գործեր, հավաքածու կազմելու առարկաներ, հնաոճ իրեր	0	0

Անկախ վերոգրյալ մաքսատուրքի դրույքաչափերից՝ 2203, 2204, 220410, 2205, 2206, 2207, 220820, 220830, 220840, 220850, 220860, 220870, 220890 ծածկագրերին դասվող ապրանքների համար մաքսատուրքը վճարվում է հետևյալ յուրահատուկ դրույքաչափերով՝

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքի նկարագիրը	Չափման միավորը	Մաքսատուրքի դրույքաչափը դրամով	
			Ներմուծում	Արտահանում
2203 00	Գարեջուր ածիկային	լիտր	50	0
2204	Գինի խաղողի՝ բնական, ներառյալ՝ թնդեցվածները, խաղողի քաղցու, բացի 2009 ապրանքային դիրքում նշվածից	լիտր	100	0
2204 10	Գինիներ փրփրուն	լիտր	75	0
2205	Վերմուտ և խաղողի այլ բնական գինիներ՝ բուսական կամ անուշահոտ նյութերի հավելումով	լիտր	140	0
2206 00	Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (օրինակ՝ սիդր, պերրի կամ տանձի սիդր, մեղրաըմպելիք), խառնուրդներ՝ խմորման ենթարկված ըմպելիքներից և խմորման ենթարկված ըմպելիքների ու ոչ ալկոհոլային ըմպելիքների խառնուրդներ	լիտր	60	0
2207	Էթիլային սպիրտ՝ չբնավորված 80 ծավ. % կամ ավելի սպիրտի խտությամբ, էթիլային սպիրտ և այլ սպիրտներ՝ բնավորված ցանկացած խտության	1լ 100% սպիրտի վերահաշ.	70	0

2208	Էթիլային սպիրտ՝ չբնափոխված 80 ծավ. % պակաս սպիրտի խտությամբ, սպիրտային թուրմեր, լիկյորներ և սպիրտային այլ խմիչքներ, այդ թվում՝	1 և 100% սպիրտի վերահաշ.		
2208 20	սպիրտային թուրմեր՝ ստացված խաղողի գինու կամ խաղողի մզվածքի թորման արդյունքում		1100	0
2208 30	վիսկի		370	0
2208 40	ռում և տաֆֆա		420	0
2208 50	ջին և գինու թրմողի		450	0
2208 60	օղի		380	0
2208 70	լիկյորներ		600	0
2208 90	այլ սպիրտային խմիչքներ		240	0

Մաքսային մարմինների կողմից մաքսատուրքը հաշվարկվում է այն դրույքաչափով, որը գործում է ապրանքների հայտարարագրման օրվա դրությամբ, իսկ մաքսատուրքի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման օրվանից տասնօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ընթացակարգով:

Մաքսատուրքը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով՝ դրամով:

Ապրանքներ տեղափոխող անձի կողմից չվճարված կամ թերի վճարված մաքսատուրքի գումարը մաքսային մարմինների կողմից գանձվում է դրա վճարման պարտավորության առաջացման պահից երեք տարվա ընթացքում:

Մաքսատուրքի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված մաքսատուրքի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

«Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվող ապրանքները ենթակա են մաքսատուրքով գանձման, բացառությամբ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

«Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափերը սահմանված են 0 %:

Մաքսային մարմինների կողմից մաքսատուրք չի հաշվարկվում և գանձվում հետևյալ մաքսային ռեժիմներով բաց թողնվող ապրանքներից՝

- Տարանցիկ փոխադրում
- Ժամանակավոր ներմուծում
- Ժամանակավոր արտահանում
- Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար
- Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար
- Ներմուծում մաքսային պահեստ
- Ներմուծում ազատ մաքսային պահեստ
- Ոչնչացում
- Ներմուծում ազատ տնտեսական գոտի
- Սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության
- Ներմուծում՝ անմաքս առևտրի խանութ
- Վերաներմուծում և վերաարտահանում, *բացառությամբ հետևյալ դեպքերի՝*

❖ Նախկինում «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների «Վերաներմուծում» ռեժիմով ներմուծման դեպքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է վճարել վերամշակված

ապրանքների ներմուծման համար «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների և վերամշակման նպատակով արտահանված ապրանքների համար ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է վճարել վերամշակված ապրանքների ներմուծման համար «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների և վերամշակման նպատակով արտահանված ապրանքների համար «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հաշվարկվող մաքսային վճարների տարբերությունը, բացառությամբ մաքսավճարի, որը հաշվարկվում է առանց նվազեցումների:

❖ Նախկինում «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների «Վերաարտահանում» ռեժիմով արտահանման դեպքում ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է վճարել վերամշակված ապրանքների արտահանման համար «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների և վերամշակման նպատակով ներմուծված ապրանքների համար «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հաշվարկվող մաքսային վճարների տարբերությունը, բացառությամբ մաքսավճարի, որը հաշվարկվում է առանց նվազեցումների:

Մաքսատուրքի վճարումից ազատելը

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության համաձայն՝ մաքսատուրքի վճարումից ազատվում են՝

- այն տրանսպորտային միջոցները, որոնցով կանոնավոր կերպով իրականացվում են բեռների, ուղեբեռների և ուղևորների միջպետական փոխադրումներ, ինչպես նաև այն գործիքները, վառելանյութը, պարենային ապրանքները, որոնք կարող են անհրաժեշտ լինել ճանապարհին, միջանկյալ կանգառներում կամ հիշյալ տրանսպորտային միջոցների անսարքությունները վերացնելու համար.
- արժույթը, արտարժույթը և արժեթղթերը.
- այն ապրանքները, որոնք ներմուծվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում: Օրենսդրությամբ (այդ թվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական ու տեխնիկական բնույթի որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը.
- առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով ներմուծվող Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքները: Նշված ապրանքների ներմուծման համար սահմանված մաքսատուրքի վճարման արտոնության կիրառումից հետո երեք տարվա ընթացքում դրանց օտարման դեպքում մաքսատուրքի գումարը, ինչպես նաև դրա վճարումն ուշացնելու համար հաշվարկված տույժերը ենթակա են գանձման՝ օրենքով սահմանված կարգով.
- ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների կամ մմանատիպ միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած մուշային քանակությամբ ներմուծվող ապրանքները, որոնք ենթակա են մաքսային ձևակերպման «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով, իսկ միջոցառման ընթացքում իրացված կամ այլ նպատակներով տնօրինված ապրանքները ենթակա են մաքսային ձևակերպման «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների կամ նմանատիպ միջոցառումների շրջանակներում ներմուծվող ապրանքների համար նմուշային քանակ է համարվում միջոցառմանը մասնակցող յուրաքանչյուր անձի կողմից ներմուծված յուրաքանչյուր բաժանելի ապրանքատեսակից մինչև 50 միավոր (հատ, զույգ և այլն), եթե այդ ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 250 հազար դրամը: Նմուշային քանակներով ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների կամ նմանատիպ միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքներն ընդհանրապես ազատվում են մաքսային վճարներից, եթե միջոցառումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային Ժողովի, կառավարության, նախարարությունների, Առևտրաարդյունաբերական պալատի հրավերով կամ նախաձեռնությամբ:

Բացի մաքսատուրքից ազատման վերը նշված հիմքերից, գործում են նաև Հայաստանի Հանրապետության միջազգային (միջպետական) համաձայնագրերի շրջանակներում սահմանված արտոնություններ:

➤ **Մաքսավճար**

Մաքսավճարի դրույքաչափերը և վճարման կարգը

Մաքսավճարը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների, մաքսային հսկողության, մաքսային զննման և հաշվառման, մաքսային ուղեկցման, մաքսային մարմինների կողմից պատասխանատու պահպանության, փաստաթղթերի (ձևաթղթերի) տրամադրման համար Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների համար, բացառությամբ մաքսային զննման և հաշվառման, գանձվում է մաքսավճար՝ 3500 դրամի չափով:

Ապրանքների զննման և հաշվառման համար, բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների, գանձվում է մաքսավճար՝

- միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1000 դրամի չափով.
- միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մեկ տոննայից ավել ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ տոննայի կամ ավելի պակաս քաշի մաքսային հսկողության համար՝ 300 դրամի չափով:

Խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության, դրանց հաշվառման համար գանձվում է մաքսավճար՝ մեկ ամսվա ընթացքում միևնույն պայմանագրի հիման վրա միևնույն ուղղությամբ տեղափոխվող ապրանքաքանակի համար 500 000 դրամի չափով:

Մաքսային ձևակերպումների իրականացման վայրերից կամ մաքսային մարմինների աշխատանքային ժամերից դուրս մաքսային ձևակերպումների կամ դրանց հետ կապված առանձին գործողությունների կատարման համար գանձվում է մաքսավճար՝ սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:

Մաքսային մարմինների կողմից վերադաս մաքսային մարմնի սահմանած ցանկում ընդգրկված յուրաքանչյուր փաստաթղթի (ձևաթղթի) տրամադրման համար գանձվում է մաքսավճար՝ 1000 դրամի չափով: Ներկայումս գործող ցանկում ներառված են

մաքսային հայտարարագիրը, փոխադրման ամփոփագիրը, մաքսային վճարների բյուջե փոխանցման հանձնարարականը, ավտոտրանսպորտային միջոցները ՀՀ պետավտոտեսչությունում մշտական և ժամանակավոր հաշվառման վերցնելու համար տրվող հատուկ ձևերը:

Ապրանքների՝ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային ուղեկցման համար գանձվում է մաքսավճար՝ յուրաքանչյուր հարյուր կիլոմետրի համար 10 000 դրամի չափով:

Մաքսային մարմինների կողմից ապրանքների պատասխանատու պահպանության համար գանձվում է մաքսավճար՝

- մինչև մեկ տոննայի համար օրական 1000 դրամի չափով.
- մեկ տոննայից ավել յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար օրական 300 դրամի չափով:

Տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար գանձվում է մաքսավճար՝

ա) մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաների համար 2000 դրամի չափով.

բ) այլ տրանսպորտային միջոցների համար 5000 դրամի չափով:

Մաքսավճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով՝ դրամով, համապատասխան ծառայությունների մատուցման պահից եռօրյա ժամկետում, բայց ապրանքների բաց թողնման պահից ոչ ուշ:

Ապրանքներ տեղափոխող անձանց կողմից չվճարված կամ թերի վճարված մաքսավճարի գումարները գանձվում են դրանց վճարման պարտավորության առաջացման պահից՝ երեք տարվա ընթացքում:

Մաքսավճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված մաքսավճարի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Մաքսավճարի վճարումից ազատելը

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության համաձայն՝ մաքսավճարի վճարումից ազատվում են՝

ա) այն ապրանքները, որոնք ներմուծվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում: Օրենսդրությամբ (այդ թվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական ու տեխնիկական բնույթի որոշում է մարդասիրական օգնությունը համակարգող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը.

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմով արտահանվող և հետադարձ ներմուծվող մշակութային արժեքները.

գ) միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները՝ այդ փոխադրումների իրականացման ժամանակ:

➤ **Ավելացված արժեքի հարկ**

Ավելացված արժեքի հարկի դրույքաչափը և հարկման օբյեկտը

Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը գանձվում է պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-118) համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք է համարվում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ն հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին, բացառությամբ՝

ա) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող, օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքների, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման.

բ) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական (ներառյալ՝ բարեգործական), կրոնական և մանաստիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ԱԱՀ վճարողների կողմից նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման:

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանված է 20 %՝ ապրանքների և ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

ԱԱՀ-ի վճարման կարգը

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ներմուծման ժամանակ ԱԱՀ-ով հարկը հաշվարկվում է դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշված մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի հանրագումարից:

Ներմուծվող ապրանքների համար ավելացված արժեքի հարկը վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում:

Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից արտադրական գործընթացում օգտագործվող որոշ սարքավորումներ, հումք և նյութեր ներմուծելիս ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգվում է՝

- 1 տարի ժամկետով՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի մինչև 70 մլն. դրամ լինելու դեպքում,
- 2 տարի ժամկետով՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 70-ից 300 մլն. դրամ լինելու դեպքում,
- 3 տարի ժամկետով՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 300 մլն. դրամից ավելի լինելու դեպքում:

ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 մլն. դրամը գերազանցող ապրանքներ ներմուծելիս ԱԱՀ-ի վճարումը կարող է հետաձգվել 3 տարի ժամկետով:

Ավելացված արժեքի հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված ավելացված արժեքի հարկի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ԱԱՀ վճարողների կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման նպատակով Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օտարերկրյա անձանց վճարման ենթակա վերամշակման արժեքը, իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերամշակումից հետո դրանց մաքսային արժեքի և նախկինում արտահանման ժամանակ դրանց հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը:

Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ-ի հաշվարկումը և գանձումը հիմնավորվում է մաքսային ձևակերպումների ժամանակ լրացվող մաքսային հայտարարագրերով և վճարման փաստաթղթերով (վճարման հանձնարարագիր, անդորրագիր կամ վճարումը հավաստող այլ փաստաթղթեր):

ԱԱՀ-ով չեն հարկվում

ա) տիրագուրկ, ժառանգության իրավունքով պետությանն անցած արժեքների, գանձերի իրացման շրջանառությունը.

բ) բռնագրավման կամ նվիրատվության ձևով գույքի օտարումը պետությանը:

ԱԱՀ-ի վճարումից ազատելը

ԱԱՀ-ի վճարումից ազատվում են Հայաստանի Հանրապետություն ներմուծվող մշակութային արժեքները:

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումը

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ է կիրառվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝

ա) Հայաստանի Հանրապետություն մաքսային սահմանից դուրս «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, ինչպես նաև միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ.

բ) միջազգային երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների սպասարկման (ներառյալ՝ աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի), նորոգ- ման, վերասարքավորման, ինչպես նաև միջազգային երթուղիներով փոխադրվող ուղևորների, ուղեբեռների և փոստի սպասարկման ծառայությունների և փոխադրման ընթացքում ուղևորներին մատուցվող ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ.

գ) օտարերկրյա անձանց կողմից տրված հումքից, նյութերից ու կիսաֆաբրիկատներից իրենց պատվերով Հայաստանի Հանրապետության տարածքում այն արտադրանքի մշակման կամ հավաքման, շարժական գույքի նորոգման, արդիականացման ու համանման այլ ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնք արտահանվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում.

դ) ՀՀ տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ.

Առանձին օրենքներով կարող են սահմանվել ԱԱՀ-ից ազատման և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված այլ արտոնություններ:

Բացի այդ, օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված ապրանքներն արտահանելիս դրանց համար հանրապետության տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները վերադարձվում են նրանց:

➤ **Ակցիզային հարկ**

Ակցիզային հարկով հարկման օբյեկտը

Ակցիզային հարկն օրենքով սահմանված ապրանքների ՀՀ մաքսային սահմանով ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող անուղղակի հարկ է:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են գարեջուրը, խաղողի և այլ գինիները, սպիրտը և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարեխաները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքը, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի):

Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը ՀՀ մաքսային սահմանով:

Ակցիզային հարկի դրույքաչափերը և վճարման կարգը

Ակցիզային հարկը վճարվում է «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-79) սահմանված հետևյալ դրույքաչափերով՝

Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ-ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)
2203	գարեջուր	ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	105
2204	խաղողի եվ այլ գինիներ, գինենյութ	ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 150 դրամ
2205	վերմուտ եւ խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են	ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	600

	բուսական արոմատիկ էքստրակտներ	եւ		
2206	խմորման ենթարկված ըմպելիքներ (խնձորի պերրու սիդր, (տանձի սիդր), մեղրաըմպելիք)	այլ սիդր, (տանձի սիդր)	ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար	200
2207	էթիլային սպիրտ		ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	700
2208	սպիրտային խմիչքներ		ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 600 դրամ
2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ		1 կիլոգրամ	1500
2709	հում նավթ եվ նավթամթերքներ		1 տոննա	27000
2711 (բացառությամբ 2711 11 եւ 2711 21)	նավթային գազեր եվ գազանման այլ անխաջրածիններ (բացառությամբ բնական գազի)		1 տոննա	1000

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2208 ծածկագրին դասվող 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքատեսակների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7,5 դրամով, իսկ մինչև 9 տոկոսը ներառյալ սպիրտայնություն պարունակող խմիչքների համար սահմանվում է յուրաքանչյուր լիտրի համար 100 դրամ:

Ծխախոտի արտադրանքի և ներմուծվող դիզելային վառելիքի ու բենզինի ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանվում են առանձին օրենքներով:

Օրենքով կարող են սահմանվել ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճարներ:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանում կարգով:

Ակցիզային հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված ակցիզային հարկի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Ակցիզային հարկի վճարումից ազատելը

Ակցիզային հարկի վճարումից ազատվում են՝

ա) «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված մաքսային ռեժիմներով ՀՀ մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները.

բ) օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրագուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումն ու օտարումը.

Օրենքով կարող են սահմանվել ակցիզային հարկից ազատման այլ արտոնություններ:

Պետական գրանցում ստացած անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ակցիզային հարկ վճարողներից ձեռք բերված ակցիզային հարկով հարկված ապրանքների արտահանման դեպքում վճարված ակցիզային հարկի գումարները ենթակա են հաշվանցման այդ անձանց այլ հարկային պարտավորությունների հաշվին կամ վերադարձման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

➤ **Հաստատագրված վճարներ**

Հաստատագրված վճարների տեսակները

Հայաստանի Հանրապետությունում ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի նկատմամբ ներկայումս կիրառվում են հաստատագրված վճարներ, որոնք փոխարինում են դրանցից գանձվող ակցիզային հարկին և ավելացված արժեքի հարկին, իսկ ծխախոտի արտադրանքի ներմուծման դեպքում՝ նաև մաքսատուրքին: ՀՀ մաքսային սահմանով ներմուծվող ապրանքներից գանձվում են հետևյալ հաստատագրված վճարները՝

ա) բենզինի և դիզելային վառելիքի համար ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված միասնական հաստատագրված վճարները՝ հետևյալ դրույքաչափերով՝

դիզելային վառելիքի համար՝ մեկ տոննային 32500 դրամ.

բենզինի համար՝ մեկ տոննային 112000 դրամ.

բ) սիգարետների, սիգարետների և սիգարետների համար ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված միասնական հաստատագրված վճարները՝ հետևյալ դրույքաչափերով՝

Ապրանքի ծածկագիրը ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ապրանքի անվանումը	Ներմուծվող արտադրանքի համար հաստատագրված վճարի չափը (դրամ 1000 հատի համար)
2402 10 000 11	սիգարներ՝ ծխախոտ պարունակող	550000
2402 90 000 11	սիգարներ՝ այլ	
2402 10 000 12	սիգարելաներ՝ ծխախոտ պարունակող	15000
2402 90 000 12	սիգարելաներ՝ այլ	
2402 20 900 11	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող՝ ֆիլտրով	6500
2402 20 100 11	սիգարետներ՝ մեխակ պարունակող՝ ֆիլտրով	
2402 90 000 13	սիգարետներ՝ այլ՝ ֆիլտրով	
2402 20 900 12	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող՝ առանց ֆիլտրի	3250
2402 20 100 12	սիգարետներ՝ մեխակ պարունակող՝ առանց ֆիլտրի	
2402 90 000 14	սիգարետներ՝ այլ՝ առանց ֆիլտրի	

Հաստատագրված վճարների վճարման կարգը

Ներմուծվող ապրանքների համար հաստատագրված վճարը վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում: Հաստատագրված վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված հաստատագրված վճարի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

➤ **Ճանապարհային վճարներ**

Ճանապարհային վճարի տեսակները

Ճանապարհային վճարը Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է:

Հայաստանի Հանրապետությունում մաքսային մարմինների կողմից գանձվում են հետևյալ ճանապարհային վճարները՝

ա) այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը.

բ) այլ պետություններում գրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը.

գ) մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը:

Ճանապարհային վճարների դրույքաչափերը և վճարման կարգը

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը յուրաքանչյուր մուտքի համար գանձվում է ՀՀ դրամով «Ճանապարհային վճարների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-203) սահմանված հետևյալ տասնհինգօրյա դրույքաչափերով՝

1. Թեթև մարդատար (մինչև 7 նստատեղով) ավտոմեքենաների համար՝ 10,000

2. Ավտոբուսների համար՝

ա) մինչև 13 նստատեղով՝ 20,000

բ) 13-ից մինչև 30 նստատեղով՝ 40,000

գ) 30 և ավել նստատեղով՝ 60,000

3. Բեռնատար ավտոմեքենաների և

ավտոգնացքների համար՝

ա) մինչև 1,5 տոննա բեռնատարողությամբ՝ 15,000

բ) 1,5-ից մինչև 3 տոննա բեռնատարողությամբ՝ 25,000

գ) 3-ից մինչև 5 տոննա բեռնատարողությամբ՝ 40,000

դ) 5-ից մինչև 10 տոննա բեռնատարողությամբ՝ 65,000

ե) 10-ից մինչև 20 տոննա բեռնատարողությամբ՝ 80,000

զ) 20-ից մինչև 36 տոննա բեռնատարողությամբ՝ 110,000

1) 36 և ավել տոննա բեռնատարողությամբ՝ 150,000

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը հաշվարկվում և պետական բյուջե է գանձվում այդ տրանսպորտային միջոցների Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելիս, բացառությամբ դրանց Հայաստանի Հանրապետության տարածքում տասնհինգից ավելի օր գտնվելու դեպքի, երբ յուրաքանչյուր հաջորդ տասնհինգ օրվա կամ ավելի պակաս ժամկետի համար այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը հաշվարկվում և պետական բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամկետը լրանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

Տասնհինգօրյա ընթացքում Հայաստանի Հանրապետություն մեկից ավելի անգամ մուտք գործելու դեպքում այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը գանձվում է յուրաքանչյուր մուտքի համար մեկ անգամ:

ՀՀ օրենսդրությամբ ծանրաքաշ են համարվում այն տրանսպորտային միջոցները, որոնց հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկը գերազանցում է՝

- ընդհանուր զանգվածը՝ 36 տոննան

- մեկ առնիով կամ բազմաթիվ

բեռնվածքը՝ 10 տոննան

- երկու առնիով կամ բազմաթիվ

բեռնվածքը՝ 18 տոննան

- երեք առնիով կամ բազմաթիվ

բեռնվածքը՝ 22 տոննան

Երկու կամ երեք սռնիով կամրջակներ են համարվում այն կամրջակները, որոնց հարևան սռնիների հեռավորությունը միմյանցից չի գերազանցում 2,5 մետրը:

Այլ պետություններում գրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը գանձվում է տրանսպորտային միջոցի ընդհանուր զանգվածի և սռնիի (կամրջակի) վրա ընկնող բեռնվածքների համար օրենքով սահմանված դրույքաչափերի գումարի և ավտոմոբիլային ճանապարհներով տեղափոխման հեռավորության արտադրյալի չափով:

36 և ավել տոննա ընդհանուր զանգվածով (կշռով) տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է ՀՀ դրամով հետևյալ դրույքաչափերով՝

-36-ից մինչև 40 տոննա	110
- 40-ից մինչև 45 տոննա	130
- 45-ից մինչև 50 տոննա	155
- 50-ից մինչև 55 տոննա	175
- 55-ից մինչև 60 տոննա	220
- 60-ից մինչև 65 տոննա	265
- 65-ից մինչև 70 տոննա	310
- 70-ից մինչև 75 տոննա	375
- 75-ից մինչև 80 տոննա	440
- 80-ից մինչև 85 տոննա	550
- 85-ից մինչև 90 տոննա	770
- 90-ից մինչև 95 տոննա	1100
- 95-ից մինչև 100 տոննա	1540

100 և ավել տոննայի համար՝ 1540 դրամին գումարած 100 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 88 դրամ:

Սեկ սռնիով կամրջակի վրա 10 տոննայից ավել բեռնվածքով տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է ՀՀ դրամով հետևյալ դրույքաչափերով՝

- 10-ից մինչև 10,5 տոննա	45
- 10,5-ից մինչև 11 տոննա	110
- 11-ից մինչև 11,5 տոննա	175
- 11,5-ից մինչև 12 տոննա	265
- 12-ից մինչև 12,5 տոննա	375
- 12,5-ից մինչև 13 տոննա	530
- 13-ից մինչև 13,5 տոննա	770
- 13,5-ից մինչև 14 տոննա	1100
- 14-ից մինչև 14,5 տոննա	1430
- 14,5-ից մինչև 15 տոննա	1760
- 15-ից մինչև 15,5 տոննա	2100
- 15,5-ից մինչև 16 տոննա	2400

16 և ավել տոննայի համար՝ 2400 դրամին գումարած 16 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 45 դրամ:

Երկու սռնիով կամրջակի վրա 18 տոննայից ավել բեռնվածքով տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է ՀՀ դրամով հետևյալ դրույքաչափերով՝

- 18-ից մինչև 19 տոննա	265
- 19-ից մինչև 20 տոննա	380
- 20-ից մինչև 21 տոննա	430
- 21-ից մինչև 22 տոննա	700

- 22-ից մինչև 23 տոննա	925
- 23-ից մինչև 24 տոննա	1190
- 24-ից մինչև 25 տոննա	1540
- 25-ից մինչև 26 տոննա	1950

26 և ավել տոննայի համար՝ 1950 դրամին գումարած 26 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 55 դրամ:

Երեք սոնիով կամրջակի վրա 22 տոննայից ավել բեռնվածքով տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը տեղափոխման յուրաքանչյուր կիլոմետրի համար գանձվում է ՀՀ դրամով հետևյալ դրույքաչափերով՝

- 22-ից մինչև 22,5 տոննա	90
- 22,5-ից մինչև 23 տոննա	110
- 23-ից մինչև 24 տոննա	175
- 24-ից մինչև 25 տոննա	265
- 25-ից մինչև 26 տոննա	395
- 26-ից մինչև 27 տոննա	550
- 27-ից մինչև 28 տոննա	705
- 28-ից մինչև 29 տոննա	880
- 29-ից մինչև 30 տոննա	1080
- 30-ից մինչև 31 տոննա	1300
- 31-ից մինչև 32 տոննա	1540
- 32-ից մինչև 33 տոննա	1805
- 33-ից մինչև 34 տոննա	2135
- 34-ից մինչև 35 տոննա	2650

35 և ավել տոննայի համար՝ 2650 դրամին գումարած 35 տոննան գերազանցող յուրաքանչյուր տոննայի համար՝ 55 դրամ:

ՀՀ օրենսդրությամբ մեծ եզրաչափերով են համարվում այն տրանսպորտային միջոցները, որոնց եզրաչափերից առնվազն մեկը (ներառյալ՝ բեռի չափերը) գերազանցում է՝

բարձրությունը ճանապարհի ծածկի մակերեսից՝ 4 մետրը.

լայնությունը՝ 2,5 մետրը.

երկարությունը՝ մեկ կցորդի (կիսակցորդի) դեպքում՝ 20 մետրը, երկու և ավել կցորդների դեպքում՝ 24 մետրը:

Մեծ եզրաչափերով են համարվում նաև այն տրանսպորտային միջոցները, որոնց բեռը դուրս է գալիս տրանսպորտային միջոցի հետին եզրագծից 2,5 մետրից ավելի:

Մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկության համար ավտոմոբիլային ճանապարհներով յուրաքանչյուր տասը կիլոմետր տեղափոխելու համար վճարը 110 ՀՀ դրամ է:

Ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքաշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկության վճարը գանձվում է յուրաքանչյուր երթի համար, մինչև երթուղի դուրս գալը:

Ճանապարհային վճարի վճարումն ուշացնելու համար վճար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի գումարի 0,25 տոկոսի չափով, սակայն ոչ ավել, քան պակաս վճարված վճարի գումարը:

Ճանապարհային վճարից ազատելը

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարից ազատվում են՝

1. ավտոմոբիլային տրանսպորտով Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական և տեխնիկական օգնությունների, բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրող վճար վճարողները՝ այդ փոխադրումների համար:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային Ժողովի, կառավարության, նախարարությունների և գերատեսչությունների հրավերներով Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների սեփականատերերը:

3. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմերը՝ իրենց անձնական և պաշտոնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար:

4. Հայաստանի Հանրապետությունում տեղակայված՝ Ռուսաստանի Դաշնության ռազմականներ բեռներ և զինվորներ փոխադրող վճար վճարողները՝ այդ փոխադրումների համար:

Բացի վերը նշված արտոնություններից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համապատասխան կիրառվում են դրանցով նախատեսված ճանապարհային վճարներից ազատման այլ արտոնություններ:

➤ **Բնապահպանական վճարներ**

Բնապահպանական վճարների տեսակները և վճարման կարգը

Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

Մաքսային մարմինների կողմից «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գանձվում են հետևյալ բնապահպանական վճարի տեսակները՝

ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար:

բ) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար:

Վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար վճարը մաքսային մարմինների կողմից գանձվում է այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելու պահին՝ հետևյալ դրույքաչափերով:

Ծածկագիրը՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Ավտոտրանսպորտային միջոցի նկարագիրը	Դրույքաչափը (դրամ)
		Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների

		բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ծխայնության) պարունակության սահմանային թույլատրելի	
		նորմաների սահմաններում կատարվող արտանետումների դեպքում	նորմաների սահմաններից ավելի՝ վերոգրյալ նյութերից առնվազն մեկի գծով արտանետումների դեպքում
8703 21-8703 33	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված մինչև 10 մարդ (ներառյալ՝ վարորդը) տեղափոխելու համար	3 750	7 500
8702	մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված 10 և ավելի մարդ (ներառյալ վարորդը) տեղափոխելու համար, բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների	10 000	20 000
8704 21 8704 31	բեռների փոխադրման համար՝ 5 տոննայից ոչ ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	5 000	10 000
8704 22 8704 32	բեռների փոխադրման համար՝ 5 տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 20 տոննա առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	10 000	20 000
8704 23	բեռների փոխադրման համար՝ 20 տոննայից ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ	15 000	30 000:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ՝ տոկոսներով և պետական բյուջե է վճարվում ՀՀ մաքսային տարածք ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում՝ հետևյալ դրույքաչափերով.

Ծածկագիրը՝	Ապրանքի համառոտ անվանումը	Դրույքաչափը
------------	---------------------------	-------------

ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի		Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար՝ ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ, տոկոսով
2707 2709 00 2710 2713 2714 90 000 2715 00 000	հանքային յուղեր, հում նավթ և հում նավթամթերք, նավթ և նավթամթերք, վառելիքաքսուքային նյութեր, մայքսձյութ և ասֆալտ (բացառությամբ 2710 11 410, 2710 11 450, 2710 11 490 ծածկագրերով դասակարգվող բենզինի, 2710 19 930 ծածկագրով դասակարգվող էլեկտրական մեկուսիչ յուղերի և 2710 91 000, 2710 99 000 ծածկագրերով դասակարգվող օգտագործված նավթամթերքի)	2.0
2710 19 930 2710 91 000 2710 99 000	էլեկտրական մեկուսիչ յուղեր, օգտագործված նավթամթերք	3.0
2903 41 000 2903 42 000 2903 43 000 2903 44 100 2903 44 900	ֆտորեռաքլորմեթան (ֆրեոն-11), [CFCl ₃] երկֆտորերկքլորմեթան (ֆրեոն-12), [CF ₂ Cl ₂] եռֆտորեռաքլորմեթան (ֆրեոն-113), [C ₂ F ₃ Cl ₃] քառաֆտորերկքլորմեթան (ֆրեոն-114), [C ₂ F ₄ Cl ₂] հինգֆտորքլորմեթան (ֆրեոն-115) [C ₂ F ₅ Cl]	2.0
2903 46 100 2903 46 200 2903 46 900	երկֆտորբրոմքլորմեթան (հալոն-1211) [CF ₂ BrCl] եռֆտորբրոմմեթան (հալոն-1301) [CF ₃ Br] քառաֆտորերկքլորմեթան (հալոն-2402) [C ₂ F ₄ Br ₂]	2.0
3215 11 00 3215 19 000	տպագրական ներկ	3.0
3402	լվացող նյութեր	0.5
3701 3702 3704 00 100 3705 3706	կինո-ֆոտո ժապավեններ	0.8
3819 00 000	արգելակման հեղուկներ	2.0
3820 00 000	հակասառնեցնող և հակասառցապատող հեղուկներ պատրաստի	2.0
3923 3925 10 000	պլաստմասսայից արտադրանք ապրանքների փաթեթավորման և տեղափոխման համար, 300լ	2.0

	ծավալից ավելի ցիատեռններ, բաքեր և համանման տարողություններ պլաստմասսայից	
4011 4012	անվադողեր	1.0
4013	ռետինե օդախցիկներ	1.0
6811 6812 6813	արտադրանք ասբեստից, ֆրիկցիոն նյութեր, (բացառությամբ 6813 10 100 և 6813 90 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	3.0
7019	ապակյա մանրաթել	0.8
78	կապար և կապարից պատրաստված արտադրանք	3.0
8311 10	էլեկտրոդներ	1.5
8421 23	ներքին այրման շարժիչների յուղի կամ վառելիքի ֆիլտրեր (բացառությամբ 8421 23 100 ծածկագրով դասակարգվող ապրանքների)	1.0
8506 30	առաջնային մարտկոցներ սնդիկ-օքսիդային	1.5
8506 40	առաջնային մարտկոցներ արծաթ-օքսիդային	1.5
8506 80	առաջնային մարտկոցներ այլ	1.5
8507 10 8507 20	մարտկոցներ կապարային (բացառությամբ 8507 10 100 և 8507 20 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	3.0
8507 30 8507 80	մարտկոցներ կադմիում-նիկելային, մարտկոցներ այլ (բացառությամբ 8507 30 100 և 8507 80 100 ծածկագրերով դասակարգվող ապրանքների)	2.0
8507 90	մարտկոցների մասեր (բացառությամբ 8507 90 100 ծածկագրով դասակարգվող ապրանքների)	1.5
8532 22 000	էլեկտրոլիտիկ կոնդենսատորներ	3.0
8539 31	լյումինեսցենտային լամպեր թերմակատողով	3.0
8539 32 100	սնդիկային լամպեր	3.0
8702, 8703, 8704, 8705	հինգ տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	2,0
8702, 8703, 8704, 8705	10 տարուց ավելի մինչև 15 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	10,0
8702, 8703, 8704, 8705	15 տարուց ավելի թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների)	20,0

Բնապահպանական վճարի վճարումն ուշացնելու համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված գումարի 0,2 տոկոսի չափով:

Բնապահպանական վճարից ազատելը

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից Հայաստանի Հանրապետության օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար վճարից ազատվում են.

1. Հայաստանի Հանրապետություն մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրումներ իրականացնողները: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակի նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ բնույթի որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը:

2. Դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարից ազատվում են Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ տեղափոխվող ապրանքները: